ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11-1>>

ք. Երևան

«29» «հունվարի» 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Անուշ Պետրոսյանն (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տուգանքը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 3300000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով**: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **15 (տասնհինգ)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի **Նոր Նորք** վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտիի փ. 1 ՀՎՀՀ 02593108	Անուշ Պետրոսյան Ա/Ձ ք. Երևան, Արշակունյաց 5 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570004526880100 ՀՎՀՀ 49557658
Է.Կիրակոսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	Ա. Պետրոսյան---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«29» «հունվարի» 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Կառավարման մարմնի պահպանում

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը
1	50311120/542	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	դրամ	Մինչև 600000	մինչև 50 անգամ	ք. Երևան Գայի 19	Նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելուց 21 օրացուցային օր հետո մինչև 25,12.2021
2	50311240/514	Լազերային տպիչների վերանորոգման և քարթրիջների լիցքավորման ծառայություններ	դրամ	Մինչև 1900000	մինչև 550 անգամ	ք. Երևան Գայի 19	Նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելուց 21 օրացուցային օր հետո մինչև 25,12.2021
3	50531200/506	Օդորակիչների վերանորոգման ծառայություններ	դրամ	Մինչև 500000		ք. Երևան Գայի 19	Նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելուց 21 օրացուցային օր հետո մինչև 25,12.2021

* Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:
* Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:
* Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:
* Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:
* Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021թ. ներառյալ/՝ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում
* Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:

Չափաբաժին 1* Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	Ծառայության միավորի առավելագույն գինը
Համակարգիչների և օժանդակ պարագաների վերանորոգում	
Համակարգչի	
Օպերատիվ հիշողություն RAM DDR 1GB –ի փոխարինումներառյալ RAM-ը	3000
Օպերատիվ հիշողություն RAM DDR2 1GB 667/800-ի փոխարինում ներառյալ RAM-ը	4000
Օպերատիվ հիշողություն RAM DDR2 2GB 667/800-ի փոխարինում ներառյալ RAM-ը	6000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 2GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը	7000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը	11000

Օպերատիվ հիշողություն RAM DDR3 8GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը	22000
Օպերատիվ հիշողություն RAM DDR4 4GB –ի փոխարինում ներառյալ RAM-ը	15000
Օպերատիվ հիշողություն RAM DDR4 8GB –ի փոխարինում ներառյալ RAM-ը	30000
PCI Express 2GB 128bit գրաֆիկական քարտիփոխարինում ներառյալ քարտը	25000
Կոշտ սկավառակ HDD 500GB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալկոշտ սկավառակը	22000
Կոշտ սկավառակ HDD 1TB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	27000
Intel Core i3-6100 3.70 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը	80000
Սնուցման բլոկ 450Watt-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	6000
Սնուցման բլոկի 600Watt-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	20000
DVD-RW փոխարինում ներառյալ DVD-RW-ն SATA	10000
Համակարգչային պահարանի փոխարինում ներառյա լպահարանը	7000
Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը	3000
Համակարգիչների ծրագրային սպասարկում /ֆորմատ/	5000
Մոնիտորի	
Սնուցման բլոկի վերանորոգում	7000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	10000
LCD կամ LED մատրիցայի փոխարինում ներառյալ մատրիցան 17"/18.5"/19"/ 20"/21.5"/22"/27"	25000
Անխափան սնուցման սարքի	
Մարտկոցի 12V/7A փոխարինում ներառյալ մարտկոցը	10000
Մարտկոցի 12V/9A փոխարինում ներառյալ մարտկոցը	13000
Մարտկոցի 12V/17A փոխարինում ներառյալ մարտկոցը	21000
Ղեկավարող սալիկի վերանորոգում	8000
Վերաչափաբերում	8000
***Ընդամենը* /մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ նախահաշիվ/**	**405000**
***Ընդամենը* /ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը/**	**250000**

Չափաբաժին 2* Լազերային տպիչների վերանորոգումև քարթրիջների լիցքավորման ծառայություններ	**Ծառայության միավորի առավելագույն գինը**
Քարթրիջների լիցավորում և վերանորոգում	
HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	**2000**
HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	**2000**
HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	**2000**
HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	**2000**
HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	**2000**
HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	**2000**
HP 201A/203A գունավոր քարթրիջի տոների փոխարինում, ներառյալ չիպը, յուրաքանչյուր գույնը	**13000**
HP 201A/203A գունավոր քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	**6000**
HP 201A/203A գունավոր քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	**8000**
Canon 303/703/708/712/719/725/737/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27 /FC-PC քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	**2000**
Canon 303/703/708/712/719/725/737/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27 /FC-PC քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	**2000**
Canon 303/703/708/712/719/725/737/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27	**2000**

/FC-PC քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	
Canon 303/703/708/712/719/725/737/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27 /FC-PC քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	2000
Canon 303/703/708/712/719/725/737/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27 /FC-PC քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	2000
Canon 303/703/708/712/719/725/737/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27 /FC-PC քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	2000
Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	2500
Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	2500
Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	2500
Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	2500
Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	2500
Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	2500
Տպիչների	
Վերանորոգում	
Պրոֆիլակտիկա	8000
Սկաների փոխարինում ներառյալ սկաները	5000
Samsung-ի վերածրագրավորում	12000
HP-ի վերածրագրավորում	5000
Canon-ի վերածրագրավորում	5000
Վառարանի թերմոժապավենի փոխարինում HP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, Lexmark E260, Phaser 3140, Xerox Phaser 3100MFP կամհամարժեքը (ներառյալ թերմոժապավենը)	5000
Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում HP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, Lexmark E260, Phaser 3140, Xerox Phaser 3100 MFP կամհամարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	6000
Վառարանի ջերմատաքացուցիչի փոխարինում HP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, Lexmark E260, Phaser 3140, Xerox Phaser 3100 MFP կամ համարժեքը (ներառյալ ջերմատաքացուցիչը)	8000
Ատամնանիվի փոխարինումHP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, կամ համարժեքը (ներառյալ ատամնանիվը)	8000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ ռետինե լիսեռը)	4000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	6000
Սնուցմանբլոկի վերանորոգում ներառյալ պահեստամասերը	15000
Պատճենահանող սարքի պրոֆիլակտիկա	8000
Պատճենահանող սարքի վերանորոգում	5000
Թերմոթաղանթի փոխարինում Canon 1215/6317/7161/1600/iR2318, կամ համարժեքը (ներառյալ թերմոթաղանթը)	8000
Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում Canon 6012/6512/1018/1022, կամհամարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	6000
Վառարանի ֆետրե կամ տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ֆետրե կամ տեֆլոնե լիսեռ Canon 1215/6317/7161/FC-PC, կամ համարժեքը	8000
Canon 1215/6317/7161/1600/iR2318, պատճենահանող սարքի սկաների փոխարինում ներառյալ սկաները	23000
Ընդամենը /մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ նախահաշիվ/	**219000**
Ընդամենը /ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը/	**68000**

Չափաբաժին 3* Օդորակիչների վերանորոգման ծառայություններ	Ծառայության միավորի առավելագույն գինը
Օդորակիչ	
Գազի արտահոսքի վերացում	6000
Գազի լիցքավորում	20000
Ներքին բլոկի լվացում, մաքրում	6000
Արտաքին բլոկի լվացում, մաքրում	6000
Կոմպրեսատորի փոխարինում նորով, ներառյալ պահեստամասը	60000
Ռելեյի փոխարինում նորով, ներառյալ պահեստամասը	3000
Կոնդենսատորի փոխարինում նորով, ներառյալ կոնդենսատորը	6000
Ֆեն շարժիչի փոխարինում, ներառյալ պահեստամասը	5000
Խողովակների փոխարինում նորով, ներառյալ պահեստամասը	5000
Կառավարման վահանակի վերանորոգում	5000
Արտաքին հովացուցիչի փոխարինում ներառյալ պահեստամասը	6000
Ներքին բլոկի վերանորոգում	6000
Արտաքին բլոկի վերանորոգում	6000
Վերամբարձ աշտարակի տրամադրում	10000
Ընդամենը /մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ նախահաշիվ/	150000
Ընդամենը /ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը/	120000

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	*ԳՄԱ կոդ (CPV)*	*տեխնիկական բնութագիրը*	*Հ/Մ*	*ընդհանուր գինը*	*ընդհանուր քանակը*	*կատարման*	
						հասցեն	*ժամկետը*
5	50311240/516	Լազերային տպիչների վերանորոգման և քարթրիջների լիցքավորման ծառայություններ	դրամ	Մինչև 300000	մինչև 80 անգամ	ք. Երևան Գայի 19	նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելուց 21 օրացուցային օր հետո մինչև 25,12.2021

* Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:
* Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:
* Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:

* Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:
* Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2021թ. ներառյալ/՝ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում
* Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:

Չափաբաժին 5* Լազերային տպիչների վերանորոգում և քարթրիջների լիցքավորման ծառայություններ	Ծառայության միավորի առավելագույն գինը
Քարթրիջների լիցավորում և վերանորոգում	
Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	**3000**
Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	**2500**
Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	**2500**
Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	**2500**
Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	**2500**
Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	**2500**
Տպիչների	
Վերանորոգում	
Պրոֆիլակտիկա	8000
Սկաների փոխարինում ներառյալ սկաները	5000
Canon-ի վերածրագրավորում	8000
Վառարանի թերմոժապավենի փոխարինում Canon i-sensys LBP 6670, կամհամարժեքը (ներառյալ թերմոժապավենը)	6000
Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում Canon i-sensys LBP 6670 կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	8000
Վառարանի ջերմատաքացուցիչի փոխարինում Canon i-sensys LBP 6670 կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	10000
Ատամնանիվի փոխարինում Canon i-sensys LBP 6670 կամ համարժեքը (ներառյալ ատամնանիվը)	10000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ ռետինե լիսեռը)	4000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	8000
Սնուցման բլոկի վերանորոգում ներառյալ պահեստամասերը	15000
Պատճենահանող սարքի պրոֆիլակտիկա	8000
Պատճենահանող սարքի վերանորոգում	5000
Թերմոթաղանթի փոխարինում Canon i-sensys LBP 6670 կամ համարժեքը (ներառյալ թերմոթաղանթը)	12000
Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում Canon i-sensys LBP 6670 կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	8000
Վառարանի ֆետրե կամ տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ֆետրե կամ տեֆլոնե լիսեռ Canon i-sensys LBP 6670, կամ համարժեքը	10000
Canon i-sensys LBP 6670 պատճենահանող սարքի սկաների փոխարինում ներառյալ սկաները	15000

Ընդամենը /մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ նախահաշիվ/	165500
Ընդամենը /ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը/	50000

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

***** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտիի փ.1
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
Ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

Ա. Պետրոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4.2
«ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11»* ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան

« » 2021թ.

ԱՁ Անուշ Պետրոսյանը, ի դեմս Ընկերության տնօրեն Անուշ Պետրոսյանի/ Նույնականացման քարտ 000107110/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:**

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

Տնօրեն-_____Ա. Պետրոսյան
/ստորագրություն/

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **ԱՁ Անուշ Պետրոսյան**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝**« Ամերիաբանկ» ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **1570004526880100**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **49557658**

8. Վճարողի ՀԾՀ՝ **6704860150**

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900015211429**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 3300000 (երեք միլիոն երեք հարյուր հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **տուժանքի մասին համաձայնագիր որակավորման ապահովում ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
«ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

« » 2021թ.

ք. Երևան

ԱՁ Անուշ Պետրոսյանը, ի դեմս Ընկերության տնօրեն Անուշ Պետրոսյանի/ Նույնականացման քարտ 000107110/,, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11** ծածկագրով գնման ընթացակարգին

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4.Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

Տնօրեն-~~[illegible]~~ Ա. Պետրոսյան
/ստորագրություն/

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **ԱՁ Անուշ Պետրոսյան**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝**«Ամերիաբանկ» ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **1570004526880100**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **49557658**

8. Վճարողի ՀԾՀ՝ **6704860150**

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ **Կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900015211429**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 330000 (երեք հարյուր երեսուն հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը **տուժանքի մասին համաձայնագիր (պայմանագրի ապահովում) ԵՔ-ԳՀԾՁԲ-21/11**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*